ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:
2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:
3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:
4. Հայերեն հատուկ անուններն ու եզրերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

ա – a	բ – b	գ – g	դ – d	ե – e	զ – z	է – ē	ը – ĕ	թ – t‘	ժ – zh
ի – i	լ – l	խ – kh	ծ – ts	կ – k	հ – h	ձ – dz	ղ – gh	ճ – ch	մ – m
յ – y	ն – n	շ – sh	ո – o	չ – ch‘	պ – p	ջ – j	ռ – ṛ	ս – s	վ – v
տ – t	ր – r	ց – ts‘	ւ – w	փ – p‘	ք – k‘	և– ew	օ – ō	ֆ – f	

5. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.
   ա. Գրերի և պարբերականների վերնագրերը գրել *շեղատառ* (italic):
   բ. Հոդվածների (և գրերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
   գ. Շարերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
   դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
   ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ ճանաչելի ձևով համառոտել:
   զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն

հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

է. Սրանց գումարվում է *ԲՄ*-ում ավանդական դարձած՝ **հեղինակի անունը թավ** (bold), իսկ ***խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ*** (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները ***Ս. Ս. Արևշատյանի***, Երևան, 1960, պրակ ԺԷ., էջ 132:

Paul J. Alexander, "Medieval Apocalypses as Historical Sources," *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ[1], ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

Philonis Alexandrini *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca*, ed. ***F. Petit*** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978

6. Հաճախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:
7. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.
   ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):
   Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):
   Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):
   Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):
   Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), http://sites. uclouvain. be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles. pdf):

8. Լուսանկարները ներկայացնել հոդվածից առանձին՝ հնարավորինս բարձր որակով:

[1] = Մատենագիրք հայոց: Այլ հաճախայտ հապավումներ են *ՊԲՀ* = Պատմաբանասիրական հանդես, *ԲՄ* = Բանբեր Մատենադարանի, *ՀԱ* = Հանդէս ամսօրեայ, *Լ* = Լրաբեր հասարակական գիտությունների, *ԲԵՀ* = Բանբեր Երևանի համալսարանի, *REArm* = Revue des Études Arméniennes: